Արձանագրություն N 3

ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-2026/Հ-2 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան

<< 19>> 12. 2025թ. Ժամը 11:00

Մասնակցում էին՝

- Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության պետ Գ. Մկրտչյան (հանձնաժողովի նախագահ),
- Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության շինարարության պլանավորման և վերահսկողության բաժնի պետ Ա. Հովհաննիսյան (գնահատող անդամ),
- Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության շինարարության պլանավորման և վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ Տ. Հարությունյան (գնահատող անդամ),
- Գնումներ համակարգող՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ասատրյան (գնահատող հանձնաժողովի քարտուղար):

Օրակարգ՝

ՀՀ ՆԳՆ կարիքների համար **ջեուցման համակարգի կառուցման** աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-2026/Հ-2 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նախագահ Գ. Մկրտչյանը նիստը հայտարարեց բացված:

1. **Տվյալներ հայտերի ուսումնասիրման և գնահատման մասին.**

ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-2026/Հ-2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման նիստը կասեցվել էր 1 աշխատանքային օրով և առաջարկվել էր ԱՐԵԳ ՇԻՆ ՍՊԸ-ին և Պիրամիդա շին գրուպ ՍՊԸ-ին ներկայացնել համատեղ գործունեության պայմանագիր, որն առնչվում է տվյալ գնման ընթացակարգին և բնակելի, հասարակական և արտադրական կառույցների բնագավառի լիցենզիայի ներդիրը: Օ Փիեռ Գրուպ ՈՒՆիվերսալ ՍՊԸ-ին առաջարկվել էր ներկայացնել ակտիվ իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղում, ինչպես նաև բնակելի, հասարակական և արտադրական կառույցների բնագավառի լիցենզիայի ներդիրը: Շտկումները կատարվել են ժամանակին և գնահատվում են բավարար:

Հանձնաժողովը որոշեց՝

ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-2026/Հ-2 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվում առաջին տեղ զբաղեցրած մասնակից ՄԱՐԿՈՒՍ ՍՊԸ և Օ Փիեռ Գրուպ ՈՒՆիվերսալ ՍՊԸ կոնսորցիումը:

Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ: Անգործության ժամկետի ավարտից հետո ՄԱՐԿՈՒՍ ՍՊԸ և Օ Փիեռ Գրուպ ՈՒՆիվերսալ ՍՊԸ կոնսորցիումին կառաջարկվի կնքել պայմանագիր:

Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0 :

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Մկրտչյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Ա. Հովհաննիսյան

Տ. Հարությունյան

Քարտուղար՝ Հ. Ասատրյան